



Ինչպես է պլաստմասսան ազդում երեխաների առողջության վրա



Պլաստմասսե իրերը՝ խաղալիքներ, շշեր, տարաներ, սպասք, տուփեր և այլն, երեխային շրջապատում են ամենուր։

Պլաստմասսան երեխաների առողջության վրա ազդում է հիմնականում դրա բաղադրությունում առկա քիմիական նյութերի միջոցով՝ ֆտալատներ, բիսֆենոլ Ա և պերֆտորալկիլային միացություններ (ՊՖԱՄ-ներ), որոնք անջատվում են ժամանակի ընթացքում, կամ բարձր և ցածր ջերմաստիճանների ազդեցությանը հետևանքով։ Վտանգը հատկապես մեծ է վաղ մանկության շրջանում, երբ օրգանիզմը դեռ ձևավորման և զարգացման փուլում է։

Վերը նշված քիմիական նյութերը կարող են մնալ երեխայի օրգանիզմում երկար ժամանակ և խոչընդոտել դրա ճիշտ աճին ու զարգացմանը։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միկրոպլաստմասսան կուտակվում է երեխաների ուղեղում և վերարտադրողական օրգաններում, ընդ որում՝ ուղեղում միկրոպլաստմասսայի քանակն ավելի մեծ է, քան երիկամներում և լյարդում։

Պլաստմասսե իրերի ազդեցությունը կարող է հանգեցնել գիրության, անպտղության, ասթմայի և ուղեղի զարգացման խանգարումների (ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ, աուտիզմ, վարքագծի փոփոխություն)։

Հաշվի առնելով առողջությանը պատճառված վնասները, անհրաժեշտ է սահմանափակել պլաստմասսայից պատրաստված կենցաղային իրերի օգտագործումը։



Խորհուրդ է տրվում նախապատվությունը տալ այլընտրանքային տարբերակներին։



Հետևե՛ք պարզ խորհուրդներին՝

- ջուրը պահե՛ք ապակյա շշերում,
- կաթը և ըմպելիքները երեխային տվե՛ք ճենապակյա կամ ապակյա բաժակով,
- սահմանափակե՛ք խոհանոցային պլաստմասսե սպասքի օգտագործումը,
- մի՛ տաքացրեք պլաստմասսե տարայով սննդամթերքն միկրոալիքային վառարանում, սառցարանում մի՛ պահեք սննդամթերքը պլաստմասսե տարաներում (երկու դեպքում էլ պլաստմասսե տարայից անջատվում են միկրոպլաստմասսաներ, որոնք սննդի հետ ներթափանցում են օրգանիզմ),
- հնարավորության դեպքում, պլաստմասսե տարաները փոխարինե՛ք ավելի անվտանգ՝ փայտյա, էմալապատ, ապակյա, չժանգոտվող մետաղյա, ճենապակյա պարագաներով:



Պաշտպանե՛ք երեխաների առողջությունը և մի՛ աղտոտեք շրջակա միջավայրը:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանաչ հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ HEJ-Support միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում պլաստմասսե թափոնների կանխարգելման, նվազագույնի հասցնելու և վերամշակելու տարբերակների մասին տեղեկատվական-լուսավորչական աշխատանք և իրազեկության բարձրացում՝ պլաստմասսայով աղտոտվածությունը և դրա ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա նվազագույնի հասցնելու համար» ծրագրի շրջանակում: